ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հոկտեմբերի 14-ից հոկտեմբերի 31-ը Հանչժոու քաղաք (Չինաստանի ժողովրդական Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Լիլիթ Ղազարյան - ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության դասակարգման և մաքսասակագնային հարցերով մասնագիտական կենտրոն-բաժնի գլխավոր մաքսային տեսուչ, ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի դասախոս

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Չինաստանի ժողովրդական Հանրապետություն, ք.Հանչժոու, հոկտեմբերի 14-ից 31-ը:

3. Հրավիրող կողմը՝

ՉԺՀ Առևտրի նախարարությունն էր («Ministry of Commerce (MOFCOM)»), իսկ կազմակերպիչները Չինաստանի Բամբուկի Ազգային կենտրոնը (China National Bamboo Research Center (CBRC)), Չինաստանի ՍԻԹԵՍ-ի կառավարման մարմինը (CITES Management Authority of China (CCMA)) և Անտառների և խոտածածկ տարածքների ազգային վարչությունը (The National Forestry and Grassland Administration (NFGA):

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցել Չինաստանի Բամբուկի Ազգային կենտրոնի (China National Bamboo Research Center (CBRC)), Չինաստանի ՍԻԹԵՍ-ի կառավարման մարմնի (CITES Management Authority of China (CCMA)) ու Անտառների և խոտածածկ տարածքների ազգային վարչության (The National Forestry and Grassland Administration (NFGA) կողմից «CITES-ն իրականացնող կողմերի պաշտոնյաների կարողությունների զարգացման վերաբերյալ» կազմակերպված սեմինարին:

Սեմինարի ընթացքում քննարկվող հարցերի մեջ աչքի ընկնող էին այն հարցերը, որոնք վերաբերվում էին վայրի բնության պահպանման կառավարմանը և CITES-ի իրականացմանը, ինչն էլ նպաստում է վերջինիս կիրարկման ընթացքում կողմեր հանդիսացող երկրների

համագործակցությանը, վայրի բնության վտանգված տեսակների մաքսանենգության զսպանը և դրա դեմ համատեղ պայքարին:

Քննարկվեցին հարցեր, որոնք կնպաստեն Չինաստանի և մասնակից երկրների հետագա արդյունավետ փոխըմբռնմանը և համագործակցությանը:

Բացի լսարանային վարժանքներից՝ ս/թ հոկտեմբերի 22-ից 25-ը ներառյալ, մասնակիցների համար կազմակերպվեցին նաև ուսումնական ճամփորդություններ՝ դեպի Հույչժոու հնագույն քաղաք, նրա Տանգյուե հիշատակի կամարների համալիր, Լոնգչուան գետի մշակութային ռեսուրսներ, Ջիքսի կոմսություն և Հու կլանների նախնիների սրահ, Անուհույ Ցինգլյանշան ազգային բնական արգելոցի հազվագյուտ բուսաբանական այգի, Հույչժոուի ազգային անտառային պարկ, որոնց արդյունքում ներկայացրեցին դրանք և փոխանցեցին մշակութային փորձը:

5. Քննարկված թեմաները՝

Ս. թ. հոկտեմբերի 14-ից 31-ը կայացած սեմինարի ընթացքում ներկայացված թեմաներն էին.

1.Ջրային վայրի բնության պահպանում և ձկնաբուծության կառավարում Չինաստանում,

2.Վայրի բույսերի պահպանում և կառավարում Չինաստանում,

3.CITES հիմնական տեսակների վերլուծություն,

4.Քննարկում CoP20-ի մտահոգության հիմնական թեմաների շուրջ,

5.Սեմինարի ապագա հեռանկարը,

6.Համաշխարհային և տարածաշրջանային բազմակողմ բնապահպանական պայմանագրերի ակնարկ,

7.Վայրի բնության առևտուր, պահպանություն և քաղաքականություն,

8.Չինաստանում CITES-ի և CITES-ի իրականացման և համապատասխանության օրենքի կիրարկումը,

9.CITES-ի իրականացման և կիրարկման վերլուծություն և հեռանկարներ,

10.Չինաստանի մաքսային մաքսանենգության դեմ պայքարի վարչության պրակտիկան անհետացող վայրի կենդանիների տեսակների դեմ պայքարում,

11.Վայրի բնության պահպանման մոնիտորինգ,

12.Մարդու և վայրի բնության համակեցությունը Չինաստանում,

13.Վտանգված փայտի նույնականացման տեխնոլոգիա և կիրառում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանչժոու քաղաքում անցկացվող սեմինարին մասնակցեցին Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության երկու ներկայացուցիչները և ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հնակենդանաբանության գիտական խմբի ղեկավարը, ով նաև ղեկավարում է Կենդանաբանական թանգարանը:

Սեմինարին մասնակցում էին Իրանի Իսլամական Հանրապետության, Զիմբաբվեի Հանրապետության, Նիգերիայի Ֆեդերատիվ Հանրապետության, Թաիլանդի Թագավորության, Միանմարի, Մավրիկիոսի Հանրապետության, Կամերունի Հանրապետության և Արևելյան Թիմորի Դեմոկրատական Հանրապետության թվով 30 ներկայացուցիչ:

Սեմինարի ընթացքում, ինչպես բոլոր երկրները՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը հանդես եկավ շնորհանդեսով, որում յուրաքանչյուր ներկայացուցիչ փոխանցեց ՀՀ-ում իր ոլորտի մասը:

Եզրափակմանը ելույթ ունեցող երկրների շարքում հանդես եկավ նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչը, ով նաև ՀՀ-ի ՍԻԹԵՍ-ի համակարգողն է:

Հարկ է նշել, որ մի շարք շրջայցերից հետո՝ հեռուստատեսությամբ հեռարձակման պայմանով, վերջինիցս Չինաստանի վայրի բնության պահպանության վերաբերյալ կազմակերպիչները վերցրեցին հարցազրույց :

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Սեմինարին մասնակցությունը թույլ է տալիս բարձրացնել ՀՀ ՊԵԿ-ում կատարվող համապատասխան աշխատանքների որակը, նույնականացնել լավագույն միջազգային փորձը, հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և փորձագետների հետ:

«Կանաչ մաքսատուն» ոչ պաշտոնական նախաձեռնության համատեքստում ՍԻԹԵՍ կոնվենցիան գրավում է իր կարևոր տեղը: Աշխարհում անօրինական առևտրի շրջանակներում մեծ մասշտաբներով ընդգրկված են այս կոնվենցիայի ներքո հսկվող կենդանիներն ու բույսերը:

Ուստի մաքսային մարմինների տեսանկյունից խիստ գնահատելի է սեմինարի շրջանակներում ստացված տեղեկատվությունը, խիստ արդիական է փորձի փոխանակումը:

Ելնելով վերոնշյալ այցի կարևորությունից՝ նպատակահարմար է մինչև տարվա ավարտը ոլորտը համակարգող պետական լիազոր մարմնի հետ թեմայի շուրջ քննարկումների արդյունքում «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ին առաջարկել ընտրել մաքսային մարմինների ճիշտ թիրախային խմբեր և դրանց համար կազմակերպել «Կանաչ մաքսատուն» նախաձեռնություն թեմայի շրջանակներում ՍԻԹԵՍ կոնվենցիայի ներածական ուսուցում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Լիլիթ Ղազարյան

05.11.2024թ